

2698

1908 № 1323.

ԱՌԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՒ

ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՀԱՇԻՒ ՏԱՄՆԵԱԿՆԵՐՈՎ ՄԻՆՁԵՐ 100 ԵՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ 20-Ի
ՇՐՋԱՆՈՒՄ

Մասկ. դպրոցների ուսուցիչների

БИБЛИОТЕКА
ИСТОРИЯ
МАТЕМАТИКИ
Государственный Музей
СССР

ԳՐԱՆ Է 12 ԿՈՊԷԿ

Փոխադրեց

ԱՐ. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆՅ



511(076)

Թ-87

Ք Ի Ֆ Լ Ի Ս

ԵԼԵԲՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԽՑ. 7
1907

(83)

511 (076)

Р-87

2 SEP 2006
20 MAY 2010

ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՒ

ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ


ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՀԱՇԻԻ ՏԱՍՆԵԱԿՆԵՐՈՎ ՄԻՆՁԵԻ 100 ԵՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ 20-Ի
ՇՐՋԱՆՈՒՄ

Մոսկ. դպրոցների ուսուցիչների

Փոխադրեց

ԱՐ. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆՑ



Թ Ի Յ Լ Ի Ս
ԵՆԵՔՏՐԱԶԱՐԻ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7
1907 (80)

19.04.2013

2648



60386-67

ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԵԱԿ

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ

1. Մայրը որդուն տուեց 2 կոպեկ, իսկ հայրը՝ 4 կոպեկ: Երկուսը միասին քանի կոպեկ տուին:
2. Մարգարիտը պոկեց 3 կարմիր և նոյնքան էլ սպիտակ վարդ: Քանի վարդ պոկեց նա:
3. Գիւղացին ունէր 5 սև և 2 սպիտակ ոչխար: Քանի ոչխար ունէր նա:
4. Տան առաջ բուսնում է 3 խնձորենի և 3 տանձենի: Քանի ծառ կայ տան առաջ:
5. Երեխան մի զրպանում ունի 4 վէզ, իսկ միւսում՝ 5 վէզ: Քանի վէզ ունի նա երկու զրպանում:
6. Գործը սկսելուց առաջ հիւսնը ստացաւ 6 մանէթ և երբ գործը վերջացրեց էլի 4 մանէթ ստացաւ: Նա ընդամենը քանի մանէթ ստացաւ:
7. Կտուրի վրայ նստած էին 5 ծիտ, նրանց մօտ եկան նստեցին էլի 3 ծիտ. Այժմ քանի ծիտ կայ կտուրի վրայ:
8. Երեխան տետրակին վճարեց 4 կոպեկ և մատիտին՝ 3 կոպեկ: Նա քանի կոպեկ ծախսեց:
9. Քանի օր կանի մի շաբաթը և 3 օրը:
10. Գիւղացին մի արտից ստացաւ 5 ջուլ, ցորեն, իսկ միւս արտից 4 ջուլ: Ընդամենը նա քանի ջուլ ցորեն ստացաւ:
11. Մարդս քանի մատ ունի երկու ձեռքի վրայ:

12. Հայրը առաւ կէս դիւթին և էլի 3 հատ աթոռ: Նա քանի աթոռ առաւ:

13. Դերձակը ունի երկու տեսակ մահուդ, մի տեսակից 4 արշին, իսկ միւս տեսակից 6 արշին: Նա ընդամենը քանի արշին մահուդ ունի:

14. Մի խնձորենուց քաղեցին 2 խնձոր, իսկ միւսից՝ 8 խնձոր: Երկու ծառից միասին քանի խնձոր քաղեցին:

15. Կօշկակարը առաջ կարեց վեց գոյգ կօշիկ, իսկ յետոյ 4 գոյգ: Նա ընդամենը քանի գոյգ կօշիկ կարեց:

16. Ճանապարհորդը առաջին ժամում անցաւ 4 վերստ, իսկ երկրորդ ժամում՝ 3 վերստ: Նա երկու ժամում քանի վերստ անցաւ:

17. Այգում կայ 2 խնձորենի և 4 տանձենի: Ընդամենը քանի պտղատու ծառ կայ այնտեղ:

18. Որսորդը ծախեց չորս հատ աղուէսի մորթի և 3 հատ արջի մորթի: Նա ընդամենը քանի մորթի ծախեց:

19. Մի մարդ 2 մանէթ ծախսեց և իրեն մօտ մընաց էլի 6 մանէթ: Նա ընդամենը ի՞նչքան փող ունէր:

20. Պարուրը 2 վէգ տանուլ տալուց յետոյ իրան էլի մնաց 7 վէգ: Նա ընդամենը քանի վէգ ունէր:

21. Տան համար առան 5 սայլ հացի և նոյնքան սայլ հաճարի փայտ: Ընդամենը քանի սայլ փայտ առան տան համար:

22. Պարտիզպանը մէկ մարզից քաղեց 8 հատ վարունգ, իսկ միւս մարզից՝ 2 հատ: Նա երկու մարզից քանի հատ վարունգ քաղեց:

23. Դիւղացին մի հանդում ցանեց 8 օրավար տեղ, իսկ միւս հանդում՝ 2 օրավար: Ընդամենը քանի օրավար տեղ ցանեց:

24. Գինեվաճառը ծախեց 7 շիշ սպիտակ և 3 շիշ կարմիր գինի: Նա ընդամենը քանի շիշ գինի ծախեց:

1. $2+1=$	2. $3+1=$	3. $3+4=$	4. $3+6=$	5. $4+4=$
$2+2=$	$3+3=$	$4+5=$	$7+2=$	$5+4=$
$3+2=$	$3+2=$	$5+2=$	$7+3=$	$6+3=$
$3+3=$	$4+2=$	$2+4=$	$5+3=$	$3+2=$
$2+3=$	$4+3=$	$7+2=$	$8+2=$	$4+5=$
$4+4=$	$5+2=$	$6+4=$	$6+3=$	$5+3=$
$4+3=$	$5+3=$	$3+4=$	$8+2=$	$8+2=$

6. $2+2+2=$	7. $3+4+2=$	8. $4+4+2=$	9. $3+2+5=$
$2+3+2=$	$4+3+2=$	$4+3+3=$	$4+5+1=$
$2+4+2=$	$5+2+3=$	$3+4+3=$	$6+2+1=$
$3+4+2=$	$4+3+2=$	$3+3+3=$	$5+2+3=$
$3+2+2=$	$3+5+2=$	$3+2+5=$	$3+3+4=$
$4+3+2=$	$6+2+2=$	$6+2+2=$	$2+5+2=$
$2+4+2=$	$7+1+2=$	$1+7+2=$	$4+2+4=$

ՀԱՆՈՒՄՆ

25. 4 հացից երկուսը կերան: Քանիսը մնաց:

26. Ծառի վրայ 5 ծիտ էին նստած: Նրանցից երկուսը թռան: Քանիսը մնացին:

27. Այգում 6 ծառ կար: Նրանցից երեքը կտրեցին: Այնտեղ քանի ծառ մնաց:

28. Երեխան 7 տետրակ ունէր. նրանցից երկուսը գործ ածեց: Քանի մաքուր տետր մնաց նրան:

29. Այգում 8 ծառ տնկեցին: Նրանցից միայն չորսը աճեցին: Քանի ծառ չորացան:

30. Պարտիզպանը 8 փութ գետնախնձոր հանեց—որից 3 փութը ծախեց: Քանի փութ գետնախնձոր մնաց իրան:

31. 10 փութ խնձորից այգեպանը ծախեց 4 փութ: Նրան էլի քանի փութ խնձոր մնաց:

32. 10 բաժակ առան. տուն տանելիս 3 հատը կորեցին: Անվնաս քանի բաժակ տուն հասցրին:

33. Ծառան ամսական ստանում է 8 մանէթ ոռճիկ, որից 3 մանէթը ծախսում է: Ամսական քանի մանէթ է խնայում նա:

34. Եղբօր և քրոջ տարիները միասին վերցրած անում է 8 տարի: Քոյրը 3 տարեկան է: Քանի տարեկան է եղբայրը:

35. Բանուորը ունէր 9 մանէթ: Այդ փողից նա 5 մանէթը ծախսեց: Նրան քանի մանէթ մնաց:

36. Խնձորենու վրայ կար 7 խնձոր, որից չորսը բաղեցին: Քանի խնձոր մնաց խնձորենու վրայ:

37. Մեղուապահը ունէր 7 փեթակ մեղու: Դրանցից 3 փեթակի մեղուները թռան—անհետացան: Այժմ քանի փեթակ մեղու ունի մեղուապահը:

38. Աղջիկը քաղեց 6 հատ ծաղիկ, որոնցից չորսը մեխակներ էին, իսկ մնացածները՝ շուշաններ: Քանի հատ շուշան քաղեց աղջիկը:

39. Մանրավաճառը իրար հետ խառնեց բարակ և խոժոր աղ և կազմեց 9 գրվանքա խառնուրդ: Նա քանի գրվանքա խոժոր աղ էր խառնել, եթէ բարակից խառնել էր 5 գրվանքա:

40. Դերձակը 10 արշին մահուդ ունէր: Այդ մահուդի երեք արշինից նա կարեց բաճկոն, իսկ 5 արշինից՝ վերարկու: Նրան էլի քանի արշին մահուդ մնաց:

41. Տակառում 8 վեդրօ ջուր կար: Այդ ջրից առաջ հանեցին 3 վեդրօ, յետոյ էլի՝ 2 վեդրօ: Քանի վեդրօ ջուր մնաց տակառում:

42. Տանտիկինը ունէր մի գրվանքա 5-անոց մոմ: Այդ մոմերից առաջին գիշերը այրեց 3 հատ, իսկ երկրորդ գիշերը՝ մնացածը: Երկրորդ գիշերը նա քանի մոմ էր այրել:

43. Չուխան գին են դնում 10 մանէթ, իսկ առնողը

ունի միայն 6 մանէթ: Քանի մանէթ է պակասում, որ նա կարողանայ առնել այդ չուխան:

44. Տան համար 10 գրուանքա շաքար առան. առաջին անգամ այդ շաքարից կոտրտեցին 3 գրուանքա, երկրորդ անգամ՝ 4 գրուանքա: Էլի քանի գրուանքա շաքար մնաց կոտրտելու:

45. 9 փութ ցորենից ջրաղացպանը աղաց 4 փութ: Էլի քանի փութ աղալու ցորեն մնաց:

10.	4—2=	11.	8—3=	12.	7—4=	13.	8—7=	14.	10—8=
	3—2=		9—2=		8—4=		9—6=		7—4=
	5—2=		6—2=		9—4=		10—4=		9—8=
	7—2=		8—2=		7—5=		9—6=		9—9=
	4—3=		10—3=		10—5=		10—8=		10—5=
	6—3=		7—3=		9—4=		9—3=		10—5=
	10—3=		6—3=		8—5=		7—5=		8—3=
	9—7=		7—4=		6—4=		8—4=		7—3=

15.	9—5—2=	16.	10—4—5=	17.	9—5—3=	18.	10—4—3=
	8—3—2=		9—4—2=		7—3—2=		9—5—3=
	7—1—2=		7—4—2=		8—3—2=		8—3—2=
	10—3—4=		9—5—3=		9—5—3=		6—3—2=
	8—2—4=		8—2—2=		7—3—2=		9—5—2=
	7—2—3=		6—3—2=		6—2—4=		8—3—4=
	9—4—3=		9—6—3=		5—3—1=		7—3—2=
	8—4—3=		7—3—3=		9—4—5=		6—4—1=

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ԵՒ ՀԱՆՈՒՄՆ

46. Երեխան մի գրպանում ունէր 5 կոպէկ, միւսում՝ 4 կոպէկ: Այդ փողերից 6 կոպէկը ծախսեց: Մօտը էլի քանի կոպէկ մնաց:

47. Որսորդը որսից բերեց 4 հատ կաքաւ, 3 հատ

մոշահաւ և մի քանի հատ էլ տատրակ, ընդամենը 10 հատ թռչուն: Քանի հատ տատրակ էր բերել:

48. Խրճիթը 2 պատուհան ունի, իւրաքանչիւրը չորս ապակիով: 5 ապակի ջարդուեցան: Քանի ապակի մնաց անփլաս:

49. Աշակերտը գրատախտակի վրայ գրեց եօթը տող, յետոյ 3 տողը ջնջեց և նրանց տեղը գրեց էլի 5 տող: Այժմ գրատախտակի վրայ քանի տող է գրած:

50. Երեք կին միասին քաղհան արին 9 մարգ. մէկը քաղհան էր արել 3 մարգ, միւսը 2: Երրորդը քանի մարգ էր քաղհան արել:

51. Գիւղացին ունէր 6 հատ սև և 3 հատ սպիտակ ոչխար: 5 ոչխարը նա ծախեց: Գիւղացուն քանի ոչխար մնաց:

52. Լուսիկը 2 հատ սև փող ունէր. մէկը՝ 5, իսկ միւսը՝ 3 կոպէկանոց: Այդ փողերից 4 կոպէկը ծախսեց: Այժմ քանի կոպէկ ունի Լուսիկը:

53. Խանութպանը 2 տոպրակ ալիւր ունէր. մէկում կար 5 փութ, իսկ միւսում՝ 4 փութ: Այդ ալիւրից նա 6 փութ ծախեց: Քանի փութ ալիւր մնաց:

54. Քոյր և եղբայր միասին 10 դեղձ ունէին: Եղբայրը կերաւ 3 դեղձ, իսկ քոյրը՝ 2: Էլի քանի հատ դեղձ մնաց երկուսին:

55. Մի գրուանքա խաղողը և մի գրուանքա դեղձը միասին արժեն 9 կոպէկ: Դեղձի գրուանքան 4 կոպէկ է, ի՞նչ արժէ խաղողի գրուանքան:

56. Արհեստաւորը 10 մանէթ աշխատեց: Այդ փողերից 3 մանէթով գործիքներ առաւ, իսկ 5 մանէթը ծախսեց ապրուստի համար: Ի՞նչքան փող մնաց արհեստաւորին:

57. Տանտիկինը ունէր մի գրուանքա հինգանոց և և մի գրուանքա չորսանոց մոմ: Առաջին գիշերը այրու-

եց 3 մոմ, երկրորդ գիշերը՝ 2, իսկ մնացածը՝ այրուեց երրորդ գիշերը: Երրորդ գիշերը քանի մոմ է այրուել:

58. Մի մարդ 3 հատ սև փող ունէր. 5, 3 և 2 կոպէկանոցներ: Այդ փողերից նա 4 կոպէկի սոխ առաւ, 5 կոպէկի վարունգներ: Էլի քանի կոպէկ մնաց նրան:

59. Չկնորսը 10 հատ ձուկ որսաց, որոնցից երեքը գեղարքունի էր, վեցը իշխան, և մնացածը կողակ: Նա քանի կողակ էր բռնել:

60. Դերձակը երկու կտոր մահուդ էր առել. մէկ կտորը 2 արշին էր, իսկ միւսը՝ 7 արշին: Այդ մահուդից 5 արշինը գործածեց մի վերարկու կարելու համար: Այժմ քանի արշին մահուդ մնաց դերձակի մօտ:

61. Գիւղացին 9 փութ ցորեն ունէր: 3 փութը նա ծախեց, 5 փութը տարաւ ջրաղաց աղալու: Էլի քանի փութ ցորեն մնաց գիւղացուն:

62. Մանրավաճառը 2 շիշ ձէթ ունէր, որոնցից մէկում կար 6 գրվանքա, իսկ միւսում՝ 4 գրվանքա: Այդ ձէթից 5 գրվանքա ծախեց մէկին, իսկ մնացածը միւսին: Նա միւսին քանի գրվանքա ձէթ ծախեց:

63. Գիւղացին մի խոտհարքից ստացաւ 5 սայլ խոտ, իսկ միւսից. 3 սայլ: Այդ խոտից 6 սայլը դէզ դրեց, իսկ մնացածը ծախեց: Նա քանի սայլ խոտ ծախեց:

64. Երկու շարք ծառեր էին տնկած. մի շարքում 4 ծառ, իսկ միւս շարքում՝ 6: Այդ ծառերից հինգը լորենի էր, իսկ մնացածը հացի: Քանի հատ հացի ծառ կար տնկած:

65. Սենեակում 9 հատ աթոռ կար շարած: Այդ աթոռներից հինգը ջարդուեցին և նրանց տեղ բերին կէս դիւժին ուրիշ նոր աթոռ: Այժմ քանի աթոռ կայ սենեակում:

$$\begin{array}{llll}
 19. \ 3+5-6=20 & 7-4+6=21 & 10-7+3= & 22. \ 9-4-2= \\
 4+4-6= & 5+3-4= & 3+7-6= & 8+2-5= \\
 5-3+4= & 4-3+9= & 4+6-7= & 6-3+7= \\
 6+2-7= & 5+4-7= & 6+3-6= & 7+2-8= \\
 8-5+4= & 8-4+5= & 7+2-5= & 5-3+7= \\
 2+6-4= & 4+5-7= & 8-4+5= & 8+2-6= \\
 4-2+7= & 10-4+3= & 9+1-7= & 5-3+8= \\
 5+3-4= & 10-6+5= & 5+3-6= & 5+5-10=
 \end{array}$$

ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

66. Մի սենեակի երկարութիւնը 7 արշին է, իսկ միւս սենեակը 2 արշինով նրանից երկար է: Ո՞րքան է երկրորդ սենեակի երկարութիւնը:

67. Գիւղացին աղաց 6 փութ ցորեն և 9 փութ գարի: Նրա աղացած գարին քանի փութով աւելի է ցորենից:

68. Քոյրը 7 տարեկան է, իսկ եղբայրը 3 տարով մեծ է քրոջից: Քանի տարեկան է եղբայրը:

69. Մի ջուլ գարին քաշում է 6 փութ, իսկ մի ջուլ ցորենը 4 փութով ծանր է գարուց: Ի՞նչքան է քաշում մի ջուլ ցորենը:

70. Մի գրվանքա ալիւրը արժէ 6 կոպէկ, իսկ մի գրվանքա քիշմիշը 4 կոպէկով թանկ է ալիւրից: Ի՞նչ արժէ մի գրվանքա քիշմիշը:

71. Մեղուապահը մի փեթակից հանեց 10 գրվանքա մեղր, իսկ միւսից 4 գրվանքով առաջինից քիչ: Քանի գրվանքա մեղր հանեց երկրորդ փեթակից:

72. Խնձորենու բարձրութիւնը 4 արշին է, իսկ բարդին 5 արշինով բարձր է խնձորենուց: Ո՞րքան է բարդու բարձրութիւնը:

73. Գիւղացին երկու ձի ունի. մէկը 9 տարեկան է, իսկ միւսը երկու տարով նրանից ջահել է: Քանի տարեկան է երկրորդ ձին:

74. Քոյրը 8 տարեկան է, իսկ եղբայրը երեք տարով փոքր է քրոջից: Քանի տարեկան է եղբայրը:

75. Պղնձի թաշտը քաշում է 10 գրվանքա, իսկ կաթսան 4 գրվանքով թեթև է թաշտից: Քանի գրվանքա է քաշում կաթսան:

76. Մի թուղի՝ երկարութիւնը 8 արշին է, իսկ միւսը 3 արշինով նրանից կարճ է: Ո՞րքան է միւս թուղի երկարութիւնը:

77. Կաղնի ծառի բարձրութիւնը 10 արշին է, իսկ մայրի ծառը 3 արշինով նրանից ցածր է: Ո՞րքան է մայրի ծառի բարձրութիւնը:

78. Մի գրվանքա բրնձը արժէ 10 կոպէկ, իսկ լոբու գրվանքան 3 կոպէկով արժան է բրնձից. Ի՞նչ արժէ լոբու գրվանքան:

79. Մի սենեակում շարուած են կէս դիւթին աթոռներ, իսկ միւսում՝ 2 աթոռով պակաս: Քանի աթոռ կայ երկու սենեակներում:

80. Մի խոտհարքից ստացուեց 6 սալ խոտ, իսկ միւսից՝ 3 սալով պակաս: Քանի սալ խոտ ստացուեց երկու խոտհարքից միասին:

81. Գիւղից մինչև քաղաք 9 վերստ է. գիւղացին առաջին ժամում անցաւ 5 վերստ, իսկ երկրորդ ժամում 2 վերստով պակաս: Մինչև քաղաք էլի քանի վերստ ճանապարհ է մնում:

82. Դերձակն առաւ 6 արշին սև մահուդ և 2 արշինով նրանից պակաս կապոյտ մահուդ: Նա ընդամենը քանի արշին մահուդ առաւ:

83. Երեսան տետրակին վճարեց 5 կոպէկ, իսկ մա-

տիտին 2 կոպէկով տետրակից պակաս: Նա տուեց 10 կոպէկանոց. ուրբան մանրափող պիտի յետ ստանայ:

84. Մի տեսակ մահուղից ֆնացել էր 5 արշին, իսկ միւս տեսակից՝ 3 արշինով պակաս: Երկու տեսակներից ընդամենը քանի արշին մահուղ էր ֆնացել:

85. Մայրը տղին տուեց 4 տանձ, իսկ աղջկան՝ 2-ով նրանից ավելի: Նա երկուսին միասին քանի տանձ էր տուել:

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄՆ

86. Պարտէզում կայ 3 ծառուղի, որոնցից իւրաքանչիւրում դարսուած են երկու երկու նստարան: Քանի նստարան կայ պարտէզում:

87. Մի գրվանքա աղը արժէ 2 կոպէկ, Ուրբան կարժենայ 4 գրվանքա աղը:

88. Մի բլիթն արժէ 2 կոպէկ: Ուրբան պիտի վճարել մի զոյգ բլիթին:

89. Ճանապարհորդը մի ժամում անցնում է 3 վերստ ճանապարհ: Նա 3 ժամում քանի վերստ ճանապարհ կանցնի:

90. Բանուորը շաբաթական ստանում է 4 մանէթ: Նա 2 շաբաթում քանի մանէթ կստանայ:

91. Մի սաժէնը 3 արշին է: Քանի արշին կլինի 2 սաժէնը:

92. Ամեն մի զինուորը օրական ստանում է 2 գրվանքա հաց: 4 զինուորը միասին օրական քանի գրվանքա հաց կստանան:

93. Աղախինը ամսական ստանում է 5 մանէթ ռոճիկ: Նա 2 ամսում քանի մանէթ կստանայ:

94. Սև հացի գրվանքան արժէ 2 կոպէկ: Ուրբան պիտի վճարել 5 գրվանքա սև հացին:

95. Մի փութ ալիւրն արժէ 2 մանէթ: Ուրբան պիտի վճարել 2, 3, 4, 5 փութ ալիւրին:

96. Մի մարդ, գրվանքան 3 կոպէկով, 3 գրվանքա հաց առաւ: Նա ինչքան վճարեց այդ հացին:

97. Մի մարդ տուն էր շինում և ամեն մի հիւանի օրական վճարում էր 2 մանէթ: Նա մի օրում 3 հիւանի քանի մանէթ պիտի վճարէր:

98. Մի շիշում մտնում է 2 մեծ բաժակ կաթ: Քանի բաժակ կաթ կտեղաւորուի 2, 3, 4, 5 շիշում:

99. Երեխան օրական խնայում է 2 կոպէկ: Նա հինգ օրում քանի կոպէկ կխնայի:

100. Մանրավաճառը ծախեց 3 հատ նարինջ և ամեն մէկի մէջ աշխատեց 2 կոպէկ: Այն ծախած նարինջներից ինքան փող վաստակեց նա:

101. Անիւի շրջապատը 2 արշին է: Նա գլորուելով 5 շրջան կատարեց: Ընդամենը ինչքան տեղ անցաւ նա:

102. Տանտիկինը առաւ 3 հատ կիտրոն, հատը 3 կոպէկով: Ուրբան փող պիտի վճարի նա:

23. $2 \times 2 =$	24. $2 \times 3 =$	25. $8 \times 1 =$	26. $2 \times 2 =$
$2 \times 1 =$	$3 \times 2 =$	$2 \times 4 =$	$4 \times 2 =$
$2 \times 3 =$	$3 \times 3 =$	$1 \times 5 =$	$2 \times 5 =$
$4 \times 1 =$	$2 \times 4 =$	$4 \times 2 =$	$3 \times 3 =$
$3 \times 2 =$	$1 \times 7 =$	$2 \times 2 =$	$3 \times 2 =$
$3 \times 1 =$	$5 \times 1 =$	$10 \times 1 =$	$2 \times 3 =$
$4 \times 2 =$	$2 \times 5 =$	$9 \times 1 =$	$3 \times 1 =$

ԲԱԺԱՆՈՒՄՆ

103. 2 գրվանքա ալիւրն արժէ 10 կոպէկ: Ինչ արժէ ալիւրի մի գրվանքան:

104. Գիւղից մինչև քաղաք 8 վերստ է. գիւղացին այդ ճանապարհը անցաւ 2 ժամում: Նա մի ժամում քա- նի վերստ ճանապարհ էր անցնում:

105. Աշակերտը 9 թերթ թուղթ ունէր: Նա այդ թղթից կարեց տետրակներ ամեն մի հատը 3 թերթից: Նա ընդամենը քանի տետրակ կարեց:

106. Դերձակն առաւ մի կտոր մահուդ—և վճարեց 10 մանէթ: Քանի արշին էր առած մահուդը, եթէ նրա արշինն արժէր 2 մանէթ:

107. 5 գրվանքա հոնին վճարեցին 10 կոպէկ: Ի՞նչ արժէ հոնի մի գրվանքան:

108. 3 գրվանքա բալին վճարեցին 9 կոպէկ: Ի՞նչ արժէ բալի գրվանքան:

109. 10 թերթ թղթից 2 թերթանոց քանի տետր կդուրս գայ. 5 թերթանոց քանի տետր կդուրս գայ:

110. 10 մանէթը քանի օր կբաւականանայ, եթէ օ- րական ծախսելու լինենք 2, 1, 5 մանէթ:

111. 2 հացի վճարեցին 8 կոպէկ: Ի՞նչ արժէ մի հացը:

112. 3 բանուոր միասին աշխատեցին 9 մանէթ և այդ փողը բաժանեցին իրար մէջ հաւասար կերպով: Նրան- ցից ամեն մէկին քանի մանէթ ընկաւ:

113. Ատաղծագործը 2 աթոռը ծախեց 6 մանէթով: Ի՞նչ արժէր մի աթոռը:

114. Երկրագործը 10 օրավար արա ունէր: Նա այդ արտը հնձել տուեց 5 օրում: Օրական քանի օրավար էին հնձում:

115. Կառապանը իւր ձիերին 5 օրում ուտեցրեց 10 փութ գարի: Օրական քանի փութ գարի էին ուտում նրա ձիերը:

116. Մի սաժէն հացի փայտը արժէ 8 մանէթ: Ի՞նչ կարժենայ այդ փայտի կէս սաժէնը:

117 Պղնձգործը 8 գրվանքա պղինձ ունէր. նա այդ

պղնձից շինեց 4 հատ հաւասար քաշի թասեր: Ամեն մի թասի համար ի՞նչքան պղինձ գնաց:

118 Երկրագործը երկու օրավար հողում ցանեց 10 փութ ցորեն—հաւասար-հաւասար: Ամեն մի օրավարում նա քանի փութ ցորեն էր ցանել:

119. Տասի մէջ քանի զոյգ կայ, 9-ի մէջ քանի 3, 10-ի մէջ քանի 5:

120. Շաքարի փութն արժէ 6 մանէթ: Ի՞նչ արժէ կէս փութ շաքարը:

121. Կալուածատէրը 10 ջուալ գարի ունէր: Այդ գա- րու հինգերորդ մասը նա ծախեց: Նրան քանի ջուալ գա- րի մնաց:

122. Տակառում 8 վեդրօ գինի կար: Այդ գինու չոր- րորդ մասը խմեցին: Էլի քանի վեդրօ գինի էր մնացել տակառում:

123. Այգում 9 հատ պտղատու ծառ կար. այդ ծա- ռերի երրորդ մասը խնձորենիներ էին: Քանի խնձորենի կար այգում:

27. 2:2=	28. 6:3=	29. 8:8=	30. 10: 2=
4:2=	6:6=	9:9=	10: 5=
3:3=	5:5=	9:3=	10:10=
4:4=	4:2=	8:4=	10: 2=
6:2=	6:2=	7:7=	9: 3=
10:2=	8:2=	8:2=	8: 4=
6:3=	8:4=	3:3=	8: 2=

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄՆ

124. 4 գրվանքա աղին վճարեցին 8 կոպէկ: Ի՞նչ ար- ժէ 3 գրվանքա աղը:

125. 3 թերթ թուղթը արժէ 6 կոպէկ: 8 կոպէկով քանի թերթ թուղթ կարելի է առնել:

126. Նաւը 3 ժամում անցաւ 9 վերստ. նա 2 ժամում քանի վերստ է անցել:

127. 2 տանձի համար վճարեցին 3 հատ 2 կոպէկանոց սև փող: Ի՞նչ արժէ մի հատ տանձը:

128. 5 խնձորը գնահատում են 10 կոպէկ: Որքան պիտի վճարենք, եթէ առնելու լինենք 3, 4 խնձոր:

129. Մանրավաճառը 4 զոյգ գրչածայրը ծախում է 8 կոպէկով: Ի՞նչ արժէ այդ գրչածայրերի մի տասնեակը:

130. Պղնձգործը 9 գրվանքա պղինձ ունէր. այդ պղնձի երրորդ մասից նա շինեց մի մատուցարան, իսկ մնացածից՝ 3 հատ հաւասար քաշի թասեր: Ի՞նչքան էր ամեն մի թասի քաշը:

131. Մանրավաճառը 3 կիտրոնը գին է դնում 9 կոպէկ: 6 կոպէկով նա քանի կիտրոն կտայ:

132. 3 արշին մահուղին վճարեցին 6 մանէթ: 8 մանէթով այդ մահուղից քանի արշին կարելի է առնել:

132. Պղնձից շինած 4 հատ թէյամանը արժէ 8 մանէթ: Այդպիսի քանի հատ թէյաման կարելի է առնել 10 մանէթով:

134. Գիւղացին 6 փութ ցորեն ունէր. այդ ցորենի երրորդ մասը ծախեց փութը 2 մանէթով: Նա ի՞նչքան փող ստացաւ:

135. Երկրագործը ցանեց 5 փութ գարի և 2 անգամ գարուց աւելի—ցորեն: Նա քանի տուրակ ցորեն է ցանել, եթէ ամեն մի տուրակում կար 2 փութ:

136. Մի մարդ 10 կոպէկով առաւ 2 գրվ. աղ և երկու գրվանքա գետնախնձոր: Գետնախնձորի գրվանքան արժէր 3 կոպէկ: Ի՞նչ արժէր աղի գրվանքան:

137. Շաքարաւազի փութը արժէ 4 մանէթ. Մի մարդ առաւ 2 փութ շաքարաւազ և վճարեց 3 հատ երեք մանէթանոց: Նա որքան փող պիտի լետ ստանայ:

138. Արհեստաւորը 10 գրվ. պղնձից շինեց 2 հատ կաթսայ, հատը 3 գրվ. ծանրութեան և մոմակալներ, հատը 2 գրվանքա ծանրութեան: Նա քանի մոմակալ էր շինել:

139. Պարտիզպանը 4 ժամուայ ընթացքում քաղհան արաւ 8 հատ մարգ: Այդպիսի 10 մարգը նա քանի ժամում քաղհան կանի:

31. $10:5 \times 2 =$ 32. $3 \times 2 + 2 =$ 33. $10:2 + 4 =$ 34. $9:3 + 6 =$
 $8:4 \times 3 =$ $4 \times 2 - 5 =$ $8:4 \times 3 =$ $4 \times 2 - 5 =$
 $6:2 \times 3 =$ $3 \times 3 - 7 =$ $9:3 \times 2 =$ $5 \times 2 - 6 =$
 $4:2 \times 5 =$ $6:2 \times 3 =$ $6:2 + 7 =$ $8:2 + 3 =$
 $6:3 \times 4 =$ $2 \times 3 + 4 =$ $10:5 + 6 =$ $6:3 \times 4 =$
 $9:3 \times 2 =$ $3 \times 2 - 5 =$ $2 \times 2 + 5 =$ $4 \times 2 - 5 =$

ԲԱՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԵՄՏՈՒԹԻՒՆ

140. Մեծ եղբայրը արտագրեց 8 երես, իսկ փոքրը՝ երկու անգամ նրանից պակաս: Բանի երես արտագրեց փոքր եղբայրը:

141. Գիւղացին ունի երկու կով և կովերից երեք անգամ աւելի ոչխար: Բանի ոչխար ունի գիւղացին:


142. Կաթսայի քաշը 5 գրվանքա է, իսկ ինքնաեռը երկու անգամ կաթսայից ծանր է: Ո՞րքան է ինքնաեռի քաշը:

143. Մի գրվանքա տանձը արժէ 5 կոպէկ, իսկ ղեղձը 2 անգամ թանգ է տանձից: Ի՞նչ արժէ ղեղձի գրվանքան:

144. Չուխան արժէ 9 մանէթ, իսկ կօշիկները՝ 3 մանէթ: Կօշիկները քանի անգամ արժան են չուխայից:

145. Բազազը ծախեց 2 արշին չիթ և չիթից 5 անգամ աւելի միակալ: Նա քանի արշին չիթակալ է ծախել:

60386.67



146. Եղբայրն ունի 9 կոպէկ, իսկ քոյրը նրանից 3 անգամ պակաս: Քոյրը քանի կոպէկ ունի:

147. Պարտիզպանը ցանեց 3 փութ սիսեռ և ստացաւ մէկին երեք: Նա քանի փութ սիսեռ ստացաւ:

148. Հիւսնը օրական ստանում է 2 մանէթ, իսկ ատաղձագործը 2 անգամ հիւսնից աւելի է ստանում: Օրական քանի մանէթ է ստանում ատաղձագործը:

149. Վաճառականը մէկին ծախեց 9 փութ շաքար, իսկ միւսին առաջինից երեք անգամ պակաս: Նա երկրորդին քանի փութ շաքար է ծախել:

150. Քոյրը 10 տարեկան է, իսկ եղբայրը 5 անգամ փոքր է քրոջից: Եղբայրը քանի տարեկան է:

151. Սև մահուղի արշինը արժէ 6 մանէթ, իսկ մոխրագոյն մահուղի արշինը՝ 2 մանէթ: Սև մահուղը քանի անգամ թանգ է մոխրագոյն մահուղից:

152. Մի գրվանքա ալիւրն արժէ 5 կոպէկ, իսկ մի գրվանքա միսը՝ 10 կոպէկ: Միսը քանի անգամ թանգ է ալիւրից:

153. Սև հացի գրվանքան արժէ 2 կոպէկ, իսկ ըսպիտակ հացը 2 անգամ թանգ է սև հացից: Ո՞րքան պիտի վճարել մի գրվանքա սև և մի գրվանքա սպիտակ հացին:

154. Տանտէրը իւր պարտէզում տնկեց 2 հատ կեռասենի և կեռասենուց 4 անգամ աւելի՝ սալորենի: Նա քանի սալորենի է տնկել:

155. Երկուսը մեծացրէք 5 անգամ, ստացած թիւը պակասացրէք վեցով և ինչ որ կստանաք, մեծացրէք 2 անգամ:

156. Ութը պակասացրէք 4 անգամ, ստացած թիւը մեծացրէք 7-ով և ինչ որ կստանաք, փոքրացրէք 3 անգամ:

ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

157. Մի սենեակում կախ է տուած 8 պատկեր, իսկ միւսում՝ 2 անգամ պակաս: Քանի պատկեր է կախ տուած երկու սենեակներում:

158. Մրգավաճառը խնձորի գրվանքան առնում էր 3 կոպէկով, իսկ ինքը ծախում էր 5 կոպէկով: Ի՞նչքան կաշխատի նա, եթէ ծախի 2 գրվանքա խնձոր:

159. Նաղշքարը փութը 4 մանէթով ձէթ առաւ: Նա տուեց 10 մանէթանոց և 2 մանէթ յետ ստացաւ: Քանի փութ ձէթ էր առել նաղշքարը:

160. Գիւղացին 2 ձի ունէր, ձիերից 5 անգամ աւելի ոչխար ունէր և ոչխարներից 5-ով պակաս կովեր: Քանի կով ունէր գիւղացին:

161. Ես մի գրպանում ունեմ 2 հատ 2 կոպէկանոց, իսկ միւսում նոյնքան հատ 3 կոպէկանոց: Քանի կոպէկ ունեմ ես երկու գրպաններում:

162. Երկու արշին մահուղին վճարեցին 6 մանէթ: Ի՞նչքան կարժենայ այդ միևնոյն մահուղի 3 արշինը:

163. Մի մարդ վճարեց 5 մանէթ և առաւ 10 արշին քաթան: 8 մանէթով այդ քաթանից քանի արշին կարելի է առնել:

164. Զորս ձեռք շոր կարելու համար գործ ածեցին 8 արշին մահուղ: 3 այդ տեսակ ձեռք շորի համար քանի արշին մահուղ կերթայ:

165. Տանտիկինը առաւ մի գրվանքա չորսանոց և մի գրվանքա հինգանոց մոմ և օրական այրում էր 3 հատ մոմ: Քանի օր բաւական կգա նրան առած մոմը:

166. Մի մարդ 10 մանէթի ապրանք առաւ և վճարեց 7 մանէթ: Նա քանի մանէթ պարտք մնաց:

167. 3 գրվանքա ալիւրին վճարեցին 9 կոպէկ: Ո՞րքան պիտի վճարեն այդ ալիւրի 2 գրվանքային:

168. Կառապանը մի ժամում անցաւ 6 վերստ, իսկ հետեւեալ ժամում՝ 2 վերստով պակաս: Երկու ժամում նա քա՞նի վերստ անցաւ:

169. Զորս հատ գրչակոթը արժէ 8 կոպէկ, իսկ 5 հատ մատիտը՝ 10 կոպէկ: Ո՞րքան պիտի վճարել մի գրչակոթի և մի մատիտի:

170. Մի մարդ առաւ 8 սայլ զաժի փայտ և չորս անգամ պակաս հաճարի փայտ: Նա ընդամենը քա՞նի սայլ փայտ է առել:

171. Ալափը 2 տոպրակ գարի ունէր—իւրաքանչիւրում 4 փութ և 2 փթով աւելի ցորեն ունէր: Նա քա՞նի փութ ցորեն ունէր:

172. Վաճառականը ծխախոտի գրվանքան ծախում էր 3 մանէթով, իսկ ինքը այդ ծխախոտը առել էր գրվանքան 2 մանէթով: Նա ի՞նչքան կաշխատի, եթէ ծախի 3 գրվ. ծխախոտ:

173. Ոսկերիչը 6 գրվանքա արծաթը հալեց և խառնեց 2 գրվանքա պղնձի հետ: Այդ խառնուրդից նա շինեց հաւասար քաշի 4 հատ մատուցարան: Ի՞նչքան էր ամեն մի մատուցարանի քաշը:

174. 2 արշին մահուղը առել են 8 մանէթով, իսկ այդ մահուղի արշինը ծախել են 5 մանէթով: Ի՞նչքան են աշխատել:

175. 10 փութ խոտ առան և օրական ձիերին ուտացնում էին 2 փութ: 4 օրից յետոյ քա՞նի փութ խոտ կ'մնայ:

176. Կշեռքի մի թաթի վրայ գրուած է 2 հատ 3 գրվանքանոց քար, իսկ միւս թաթի վրայ՝ 2 հատ 2 գրվանքանոց: Երկրորդ թաթի վրայ էլիքա՞նի գրվանքա պիտի աւելացնեն, որ կշեռքը հաւասարակշռուի:

177. Արկղում 10 գրվանքա թէյ կար: Այդ թէյից 2 մարդու ծախեցին 3—3 գրվանքա: Էլի քա՞նի գրվանքա թէյ մնաց արկղում:

178. Գիւղացին 9 փութ գարի ունէր. այդ գարին նա լցրեց տոպրակներում—իւրաքանչիւրում 3—3 փութ և ամեն մի տոպրակը ծախեց 2 մանէթով: Ի՞նչքան փող ստացաւ նա այդ բոլորի վաճառումից:

179. Երեխան քաղեց 2 հատ սպիտակ և 3 անգամ նրանից աւելի կարմիր վարդ: Նա ընդամենը քա՞նի վարդ էր քաղել:

180. Դերձակուհին ունէր 2 արշին կարմիր և 7 արշինով նրանից աւելի կապոյտ չիթ: Կապոյտ չիթից նա կարեց 3 միաչափ շրջագեղատ: Ամեն մի շրջագեղատի համար քա՞նի արշին չիթ գնաց:

181. 10 սայլ փայտ էին առել: Ամսական այրում էին 3 սայլ: 3 ամսից յետոյ էլի ի՞նչքան փայտ մնաց:

182. Մանրավաճառը նարնջի հատը առնում էր 3 կոպէկով, իսկ ինքը նրա հատը ծախում էր 5 կոպէկով: Ի՞նչքան կաշխատի նա, եթէ ծախի մի զոյգ նարինջ:

183. 5 գրվանքա աղն արժէ 10 կոպէկ, իսկ 2 գրվանքա ալիւրը՝ 8 կոպէկ: Ալիւրը քա՞նի անգամ թանգ է աղից:

184. Մեղուապահը փեթակից հանեց 10 գրվ. մեղր: Այդ մեղրի հինգերորդ մասը նա ծախեց: Ի՞նչքան մեղր մնաց նրան:

185. Երեխան 10 հատ ձուկ բռնեց. այդ ձկների հինգերորդ մասը մուրձայ էր, իսկ մնացածը կապուտ: Քա՞նի հատ կապուտ էր բռնել երեխան:

186. Մեծ եղբայրը 9 տարեկան էր, կրտսերը՝ 3 անգամ փոքր էր մեծից, իսկ միջնակը՝ 2 անգամ մեծ էր կրտսերից: Քա՞նի տարեկան էր միջնակ եղբայրը:

187. Երկու երեխայ միասին 10 հատ գրչածայր առան: Նրանցից մէկը տուեց 3 կոպէկ, իսկ միւսը՝ 2 կոպէկ: Իւրաքանչիւրը քա՞նի գրչածայր կստանայ:

188. Երեք օրում ծախսեցին 10 մանէթ: Առաջին օ-

ըլ ծախսուեց բոլոր փողի հինգերորդ մասը, երկրորդ օրը՝
 մնացորդի կէսը: Ի՞նչքան էին ծախսել երրորդ օրը:

189. Կէս դիւծին աթոռն արժէ 6 մանէթ: 8 աթո-
 ռին ո՞րքան պիտի վճարել:

190. Մայրը բաղեց 4 գրվ. մոշ, իսկ աղջիկը 2 գրը-
 վանքով մօրից աւելի: Այդ բոլոր մոշի կէսը ծախեցին:
 Իրանց քանի գրվանքա մոշ մնաց:

191. 8 կոպէկը բաժանեցէք եղբօր և քրոջ մէջ այն-
 պէս, որ եղբայրը 2 կոպէկով աւելի ստանայ քրոջից:

192. Մանրավաճառը ծախեց 10 կիտրոն—5 հատը 4
 կոպէկով: Նա ի՞նչքան փող ստացաւ:

193. 9 փութ արճընից առաջին անգամ գործածեցին
 2 փութ, երկրորդ անգամ՝ 3 անգամ աւելի: Էլի ի՞նչքան
 արճիճ մնաց:

194. Մրգավաճառը ծախեց 4 գրվանքա բալ, իւրա-
 քանչիւր 2 գրվանքան 5 կոպէկով: Նա ի՞նչքան փող
 ստացաւ:

195. Երեխան 10 կոպէկ ունէր: այդ փողի կէսով նա
 տետրակ առաւ: Էլի ի՞նչքան փող մնաց նրան:

196. Մի գրագիր մի ժամուս արտագրում էր 2 թերթ,
 իսկ միւսը՝ մի թերթով նրանից աւելի: Երկուսը միասին
 մի ժամում քանի թերթ են արտագրում:

197. Երեխան ունէր 3 հատ 2 կոպէկանոց: Նա ու-
 գում էր գիրք առնել, բայց նրան պակասում էր 4 կոպէկ:
 Ի՞նչ արժէր գիրքը:

198. Դերձակն ունէր 9 արշին մահուդ. այդ մահու-
 դի երրորդ մասից նա կարեց բաճկոն, իսկ մնացածից՝
 վերարկու: Վերարկուի համար քանի արշին մահուդ զնաց:

199. Պարտիզպանը մի տեղում ցանեց 3 փութ սի-
 սեռ, իսկ միւս տեղում 2 փութ և ստացաւ ցանածից 2
 անգամ աւելի: Նա ընդամենը քանի փութ սիսեռ ստացաւ:

200. Ալիւրի փութն արժէ 2 մանէթ: Մի մարդ ա-

ռաւ 3 փութ ալիւր և տուեց 2 հատ 5 մանէթանոց: Նա
 ի՞նչքան փող պիտի լետ ստանայ:

201. Նաւթավաճառը 8 փութ նաւթ ունէր: Այդ նաւ-
 թի չորրորդ մասը նա ծախեց, իսկ մնացածը լցրեց շիշե-
 րի մէջ, իւրաքանչիւրում երկու երկու փութ: Նա քանի
 շիշ լցրեց:

202. Վաճառականը առաջին օրը ճախեց 3 հատ գորգ,
 իսկ երկրորդ օրը՝ 4 գորգով աւելի: Նա քանի գորգ ծա-
 խեց երկրորդ օրը:

203. Պղնձագործը 3 թերթ պղինձ առաւ, ամեն մի
 թերթին վճարելով 3 մեթ: Այդ պղնձից նա պատրաստեց
 2 հատ մատուցարան, որի հատը ծախեց 5 մանէթով:
 Նրան ձեռնամուկը քանի մանէթ մնաց:

204. Մանրուք ծախողը 2 փութ շաքար առաւ
 փութը 4 մանէթով և ինքը բոլորը ծախեց 10 մանէթով:
 Նա ինչքան փող աշխատեց:

205. Գիւղացին 8 փութ գետնախնձոր հանեց և նրա
 չորրորդ մասը ծախեց: Իրան քանի փութ գետնախնձոր
 մնաց:

206. Մանրուք ծախողը 2 գրվանքա գրվանքան 3
 մանէթանոց թէյը խառնեց 2 գրվ. գրվանքան 2 մանէ-
 թանոց թէյի հետ: Ի՞նչ արժէ բոլոր խառնուրդը:

207. Կօշկակարը 2 զոյգ, զոյգը 5 մանէթանոց կօ-
 շիկները փոխեց 3 զոյգ կրկնակօշիկներին հետ: Ի՞նչ արժէ
 մի զոյգ կրկնակօշիկը, եթէ նա կրկնակօշիկներից զատ
 էլի ստացել է մի մանէթ փող:

208. Մի կին մի օրում գործում է 2 հատ գուլպայ,
 իսկ միւսը՝ մի գուլպայով նրանից աւելի է գործում: Եր-
 կուսը միասին երկու օրում քանի գուլպայ կգործեն:

209. Մի երեխայ կարդաց 10 երես ունեցող գրքի
 կէսը, իսկ միւսը՝ 9 երես ունեցող գրքի երրորդ մասը:
 Նրանցից ո՞րն աւելի է կարդացել և ի՞նչքանով:

210. Դերձակը 3 արշին մահուդ առաւ, արշինը 2 մանէթով և 2 մանէթի էլ զանազան իրեր: Նա տուեց 10 մանէթանոց թղթադրամ: Ի՞նչքան փող պիտի յետ ըստանայ:

211. Երկու զիւղացի 10 մանէթ վճարեցին և կապալով հող վերցրին: Մէկը վերցրեց 3 օրավար, իսկ միւսը՝ 2 օրավար: Ի՞նչքան պիտի վճարի նրանցից ամեն մէկը:

212. Բանուորը կիրակի օրից զատ չբանեց և երեք շաբթի օրը: Նա այդ շաբաթ ինչքան պիտի ստանայ, եթէ օրական ստանում է 2 մանէթ:

213. 10 արշին երկարութիւն ունեցող հայաթի մէջ 3 տախտակ դարսեցին: Դրանից երկուսը 4—4 արշին երկարութիւն ունէին: Ո՞րքան էր երրորդ տախտակի երկարութիւնը:

214. Երկու կողովի մէջ 10 տանձ կար: Երբ որ երկուսից էլ հանեցին հաւասար թիւ տանձեր, այն ժամանակ մէկուում մնաց 4, իսկ միւսում՝ 2 տանձ: Քանի տանձ կար ամեն մի կողովում:

$$\begin{array}{lll} 35. 2 \times 2 + 2 = & 36. 2 \times 3 + 4 = & 37. 8 : 2 + 5 = \\ 5 \times 2 - 3 = & 2 + 3 \times 2 = & 9 : 3 + 6 = \\ 1 \times 4 + 3 = & 9 - 4 \times 2 = & 4 \times 2 - 7 = \\ 2 \times 4 + 2 = & 10 - 6 : 2 = & 6 : 3 \times 4 = \\ 3 \times 3 - 7 = & 8 - 4 + 5 = & 8 : 4 \times 3 = \\ 4 \times 2 - 5 = & 8 - 6 \times 3 = & 3 \times 3 - 7 = \\ 2 \times 2 + 5 = & 9 : 3 \times 2 = & 2 \times 4 - 6 = \end{array}$$

$$\begin{array}{lll} 39. 8 : 4 + 8 - 6 = & 40. 2 \times 4 + 2 - 7 = & 41. 4 + 3 - 5 \times 4 = \\ 10 : 2 + 4 - 7 = & 3 \times 3 - 7 + 5 = & 3 + 6 - 7 \times 3 = \\ 3 \times 3 - 5 + 6 = & 10 : 2 + 4 - 6 = & 4 + 5 - 6 \times 2 = \\ 4 \times 2 - 5 + 4 = & 8 : 2 + 3 - 5 = & 10 - 8 + 4 : 3 = \\ 9 : 3 + 7 - 8 = & 4 : 2 + 8 - 4 = & 7 - 3 + 6 : 5 = \\ 6 : 2 + 7 - 9 = & 6 : 3 + 6 - 3 = & 8 - 5 \times 3 - 7 = \\ 2 \times 3 + 4 - 5 = & 2 \times 4 + 2 - 3 = & 5 + 4 + 1 : 2 = \end{array}$$

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՄՆԵԱԿՆԵՐՈՎ

ՀԱՐԻՒՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ

215. Գնացքը առաջին ժամում անցաւ 30 վերստ, իսկ երկրորդ ժամում 40 վերստ: Նա երկու ժամում քանի վերստ անցաւ:

216. Մի բազկաթուռի երես կայցնելու համար գործածեցին 50 մեխ, իսկ միւսի համար 30 մեխ: Երկու բազկաթուռի համար քանի մեխ գործածեցին:

217 Մի հօտում 20 ոչխար կայ, իսկ միւսում՝ 40: Քանի ոչխար կայ երկու հօտերում:

218. Գիւղացին իւր խրճիթը շինելու համար առաւ 30 մանէթի զերաններ և 20 մանէթի տախտակեղէն: Ընդամենը քանի մանէթի փայտեղէն առաւ նա:

219. Աղբատներին 30 կոպէկ բաժանելուց յետոյ, ինձ մօտ էլի մնաց 50 կոպէկ: Ես ի՞նչքան փող ունէի:

220. Այգեպանը մի խնձորենուց բաղեց 60 հատ խնձոր, իսկ միւսից՝ 30-ով նրանից աւելի: Երկրորդ ծառից նա քանի խնձոր է բաղել:

221. Փողոցի աջ կողմը կայ 50 տուն, իսկ ձախակողմը՝ 40 տուն: Ո՞րքան տուն կայ այդ փողոցի երկու կողմերը:

222. Հաւատանը կայ 30 սագ և սագերից 40-ով աւելի՝ հաւ: Քանի հաւ կայ հաւատանը:

223. Դալարը 70 մանէթով ձի առաւ և այն ծախեց 20 մանէթ աշխատանքով: Նա ի՞նչքանով ծախեց ձին:

224. Գիւղացին 60 փութ ցորեն ծախեց և ցորենից 30 փութով աւելի գարի: Նա քանի փութ գարի է ծախել:

225. Աղջիկը 60 կոպէկով մի գիրք առաւ և իրեն էլի քնաց 40 կոպէկ: Նա որքան փող ունէր:

226. Զթի թոփից առաջին անգամ կտրեցին 30 արշին, երկրորդ անգամ՝ 10 արշինով աւելի և էլի քնաց 20 արշին: Ընդամենը քանի արշին էր այդ թոփը:

227. Կալուածատէրը մի խոտհարքից ստացաւ 10 սայլ խոտ, իսկ միւսից՝ 30-ով նրանից աւելի: Նա ընդամենը քանի սայլ խոտ ստացաւ:

228. Պարտիզում երկու ծառուղի կայ. մէկի երկարութիւնն է 50 սաժէն, իսկ միւսը՝ 30 սաժէնով երկար է առաջինից: Ո՞րքան է երկրորդ ծառուղու երկարութիւնը:

229. Վաճառականը իր ունեցած ապրանքը ծախեց 80 մանէթով և 20 մանէթ վնաս արաւ: Այդ ապրանքը ի՞նչ արժէք իրան:

42. 10+10=	43. 60+10=	44. 30+20=	45. 30+30=
20+10=	50+10=	50+20=	40+30=
40+10=	80+10=	60+20=	60+30=
30+10=	20+20=	70+20=	70+30=
70+10=	40+20=	20+30=	50+30=
90+10=	80+20=	40+30=	10+40=

46. 40+40=	47. 50+50=	48. 30+70=
50+40=	40+60=	20+70=
60+40=	10+60=	20+80=
20+50=	30+60=	10+90=
30+50=	40+60=	10+80=
40+50=	10+70=	10+50=

Հ Ա Ն Ո Ւ Մ Ն

230. Վաճառականը 70 գրվանքա թէյ ունէր. նա մի ամսում ծախեց 50 գրվանքա: Էլի ի՞նչքան թէյ քնաց ծախելու:

231. Ծառան տարեկան ստանում է 100 մանէթ: Տարուայ ընթացքում նա ծախսում է 30 մանէթ: Նա իւր ոռճիկից տարեկան որքան է խնայում:

232. Մրգավաճառը 70 հատ վարունգ ունէր, որից 40 հատը ծախեց: Էլի ի՞նչքան վարունգ քնաց մօտը:

233. Գիւղացին մի մանէթ ունէր. նա 40 կոպէկի հաց առաւ: Էլի ի՞նչքան փող քնաց մօտը:

234. Մի գիւղ 80 տուն է, իսկ միւսը՝ 30-ով նըրանից պակաս: Դանի տուն է միւս գիւղը:

235. Կալուածատէրը 2 ձի առաւ. մէկին վճարեց 80 մանէթ, իսկ միւսին՝ 50 մանէթ: Առաջին ձին ի՞նչքանով թանկ է երկրորդ ձիուց:

236. Բանջարանոցի տէրը մի բանջարանոցից ստացաւ 90 տոպրակ գետնախնձոր, իսկ միւսից՝ 40 տոպրակով պակաս: Երկրորդ բանջարանոցից նա քանի տոպրակ գետնախնձոր է ստացել:

237. Եղբայրն 90 կոպէկ ունէր. մի գիրք առնելուց յետոյ նրա մօտ քնաց 50 կոպէկ: Ի՞նչքան արժէք գիրքը:

238. Վաճառականն ունէր 80 շուալ ցորեն և 30 շուալով նրանից պակաս գարի: Նա քանի շուալ գարի ունէր:

249. Գիւղացին 70 մանէթ տուեց մի կով առաւ: Քիչ ժամանակից յետոյ այդ կովը նա ծախեց 40 մանէթով: Նա կովի մէջ ի՞նչքան վնաս արաւ:

240. Մի թոփ մահուղն առան 80 մանէթով և 10 մանէթ վնասով ծախեցին: Ի՞նչքանով ծախեցին մահուղը:

241. Այգեպանը մի խնձորենուց քաղեց 100 հատ

խնձոր, իսկ միւսից՝ 30-ով նրանից պակաս: Քանի հատ խնձոր քաղեց նա երկրորդ խնձորենուց:

242. Հայրը 70 տարեկան է, իսկ մայրը 60: Նրանցից ով է մեծ և քանի տարով:

243. Երկրագործը 80 փութ ցորեն ունէր: Այդ ցորենից 50 փութը նա պահեց սերմացուի համար, իսկ մնացածը ծախեց: Նա ի՞նչքան ցորեն է ծախել:

244. Ալափը երկու տեսակ ալիւրից 70 փութ խառնուրդ կազմեց: Ցածր տեսակից նա խառնեց 40 փութ. լաւ տեսակից քանի փութ է խառնել:

49. 20—10=	50. 60—10=	51. 30—20=
40—10=	50—10=	50—20=
30—10=	40—20=	70—20=
70—10=	60—20=	60—30=
90—10=	80—20=	80—30=
80—10=	100—20=	40—30=

52. 70—40=	53. 70—50=	54. 80—70+50=
50—40=	90—50=	90—70+60=
90—40=	70—60=	100—70+30=
60—50=	80—60=	90—80+40=
80—50=	100—60=	100—80+60=
50—50=	90—60=	100—90+50=

55. 100—30=	56. 40+30—20=	57. 90—50+40=
50—30=	50+40—70=	60—30+30=
70—30=	40+40—60=	100—60+30=
60—40=	30+50—60=	40+30—50=
80—40=	50+20—50=	50+40—60=
100—40=	70—40+30=	40+60—80=

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄՆ

245. Երեք տակառ գինի առան, որոնցից իւրաքանչիւրում կար 20 վեդրօ: Քանի վեդրօ գինի կար բոլոր տակառներում:

246. Գործակատարը ամսական ստանում է 40 մանէթ: 2 ամսում նա քանի մանէթ կստանայ:

247. 5 տակառ շաքար առան, որոնցից իւրաքանչիւրում կար 20 փութ: Ընդամենը քանի փութ շաքար էին առել:

248. Ճանապարհորդը 2 օր ճանապարհ գնաց, օրական անցնելով 50 վերստ: 2 օրում նա քանի վերստ անցաւ:

249. Շաքարի փութը արժէ 6 մանէթ: Ի՞նչքան կարժենայ 10 փութ շաքարը:

250. Ատաղձագործը ամսական վաստակում է 20 մանէթ: Նա 4 ամսում քանի մանէթ կվաստակի:

251. Օրական ի՞նչքան խոտ կհարկաւորուի 2, 3, 4, 5 ձի կերակրելու համար, եթէ օրական ամեն մի ձիուն տալիս են 20 զրվանքա խոտ:

252. Մի փութ կտուտահատի սերմից դուրս է գալիս 10 զրվանքա ձէթ: 4, 6, 8, 9 փութ սերմից ի՞նչքան ձէթ կդուրս կգա:

253. Մեքենան իւրաքանչիւր ժամում պատրաստում է 30 հատ մեխ: Նա քանի մեխ կպատրաստի 1, 2, 3 ժամում:

254. Խոտի փութն արժէ 20 կոպէկ, իսկ գարին երկու անգամ թանգ է խոտից: Ո՞րքան կարժենայ 2 փութ գարին:

255. Տանտիկինը հաւերի համար առաւ 2 փութ կուտ և շաքաթական իւր հաւերին ուտացնում էր 10 զրվանքա: 5 շաքաթից յետոյ ի՞նչքան կուտ մնաց նրան:

256. 80 արշին երկարութիւն ունեցող թուրի մի ծայրից կտրեցին 20 արշին, իսկ միւս ծայրից՝ 2 անգամ աւելի: Ի՞նչքան երկարութեան թու մնաց:

257. Մի գիւղում 20 տուն կար, իսկ միւսում՝ 3 անգամ աւելի: Երկու գիւղում միասին քանի տուն կար:

258. Երկրագործը 10 փութ ցորեն ցանեց և ստացաւ մէկին— ութ: Նա քանի փութ ցորեն ժողովեց:

259. Կիտրոնի տասնեակը արժէ 10 կոպէկ, իսկ նարինջի տասնեակը 3 անգամ թանկ է: Ի՞նչքան պիտի վճարել 3 տասնեակ նարինջին:

$$\begin{array}{l} 38. 10 \times 2 = 59. 10 \times 9 = 60. 30 \times 3 = 61. 30 \times 3 = 50 = \\ 10 \times 3 = 10 \times 10 = 40 \times 2 = 20 \times 5 = 80 = \\ 10 \times 4 = 20 \times 2 = 50 \times 2 = 40 \times 2 = 70 = \\ 10 \times 5 = 20 \times 3 = 20 \times 4 = 20 \times 3 = 40 = \\ 10 \times 6 = 20 \times 4 = 30 \times 3 = 50 \times 2 = 70 = \\ 10 \times 7 = 20 \times 5 = 20 \times 3 = 20 \times 3 + 30 = \\ 10 \times 8 = 30 \times 2 = 20 \times 5 = 20 \times 2 + 50 = \end{array}$$

$$\begin{array}{l} 62. 20 \times 2 + 40 = \\ 40 \times 2 = 60 = \\ 10 \times 5 + 50 = \\ 20 \times 5 = 40 = \\ 30 \times 3 = 50 = \\ 20 \times 5 = 10 = \\ 50 \times 2 = 40 = \end{array}$$

Բ Ա Ժ Ա Ն Ո Ի Մ Ն

260. Ութսուն արշին կտորից 8 հաւասար չափի շրջազգեստ կարեցին: Ամեն մի շրջազգեստի համար քանի արշին կտոր դնաց:

261. 6 զրվանքա ալիւրին վճարեցին 60 կոպէկ: Ի՞նչ արժէ մի զրվանքա ալիւրը:

262. Մեղուապահը 30 փեթակից հանեց հաւասարապէս 90 զրվ. մեղր: Ամեն մի փեթակից նա քանի զրվանքա մեղր հանեց:

263. Ատաղձագործը ամսական ստանում էր 20 մանէթ: Մի յայտնի ժամանակ անցնելուց յետոյ նա ստացաւ 80 մանէթ: Նա քանի ամիս է բանել:

264. 90 ջուալ ցորենը ամբարներն ածեցին, իւրաքանչիւրում 30 ջուալ: Քանի ջուալ ցորեն էին ածել ամեն մի ամբարում:

265. Մի ջրամբարում տեղաւորւում է 80 վեղրօ ջուր, իսկ միւսում՝ 4 անգամ նրանից քիչ: Քանի վեղրօ ջուր է տեղաւորւում միւս ջրամբարում:

266. Երեք տղայ իրար մէջ բաժանեցին 80 կոպէկ, այնպէս որ առաջինը ստացաւ բոլոր փողի չորրորդ մասը, իսկ մնացածը բաժանեցին իրար մէջ հաւասարապէս միւս երկուսը: Ամեն մէկը ի՞նչքան փող ստացաւ:

267. Պղնձագործը 90 զրվանքա պղինձ ունէր: Այդ պղնձի երրորդ մասից կաթսաներ ղինեց: Ի՞նչքան պղինձ մնաց նրան:

268. Մի փութ դարին արժէ 80 կոպէկ, իսկ գետնախնձորը 2 անգամ արժան է դարուց: Ի՞նչ արժէ գետնախնձորի փութը:

269. Տանտիկինը ձմեռուայ համար 100 հատ վարունգ դարսեց աղաջրի մէջ: Այդ վարունգների հինգերորդ մասը փթեց անպէտքացաւ: Քանի վարունգ մնաց:

270. Մանրավաճառը 5 տասնեակ նարինջ ունէր: Այդ նարինջներից 4 տասնեակը ծախեց տասնեակը 20 կոպէկով: Նա ի՞նչքան փող ստացաւ:

271. Մի տակառում 80 վեղրօ գինի կար, երկրորդում՝ 2 անգամ առաջինից պակաս, իսկ երրորդում՝ 20 վեղրօյով երկրորդ տակառից պակաս: Քանի վեղրօ գինի կար երրորդ տակառում:

272. Շոգենաւը 2 ժամում անցնում է 40 վերստ: Նա 3 ժամում քանի վերստ կանցնի:

273. Մեծ քոյրը գործեց 60 արշին շալ, իսկ փոքրը՝ 2 անգամ պակաս: Նրանք երկուսը միասին քանի արշին շալ գործեցին:

274. Տանտիկինը 2 փութ ալիւր առաւ և շաբաթական գործ էր ածում 20 գրվանքա: Քանի շաբաթ բաւական կլինի նրան այդ ալիւրը:

63.	20:2=	64.	90:3=	65.	80:8=	66.	90:10=
	40:2=		40:4=		90:9=		80:10=
	60:2=		80:4=		20:10=		70:10=
	80:2=		50:5=		30:10=		90:10=
	100:2=		100:5=		40:10=		100:10=
	30:3=		60:6=		50:10=		40:10=
	60:3=		70:7=		60:10=		80:20=

67. 80:20=

100:20=

60:30=

90:30=

80:40=

100:50=

40:20=

68.	20×3:2=	69.	30×2:20=	70.	60:2×3=
	40×2:4=		40×2:20=		40:2×4=
	50×2:5=		30×3:10=		90:3×2=
	30×3:9=		20×4:40=		80:4×5=
	20×4:8=		10×9:30=		60:3×2=
	30×2:6=		10×10:50=		100:5×3=

ԲՈՒՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

275. Երկրագործը մի արտից 60 փութ ցորեն ստացաւ, իսկ միւսից՝ 2 անգամ պակաս: Նա ընդամենը քանի փութ ցորեն ստացաւ:

276. Տարուայ սկզբին գործարանում բանում էին 40 տղամարդ և 50 կին մարդ. տարուայ վերջը բանուորների թուի երրորդ մասը արձակեցին: Քանի բանուոր մնաց գործարանում:

277. Լուսացարարուհին օրական ստանում էր 50 կոպէկ, իսկ նրա աղջիկը 30 կոպէկ: Աշխատած փողի չորրորդ մասով նրանք կերակրւում էին: Օրական ի՞նչքան փող էր մնում նրանց:

278. Մրգավաճառը 100 հատ նարինջ առաւ. այդ նարինջներից 10 հատը փչացան և չծախուեցին, իսկ մնացածը նա ծախեց հաւասարապէս 3 մարդու վրայ: Ամեն մէկին նա քա՞նի նարինջ ծախեց:

279. Ուսումնարանում սովորում են 40 տղայ և նրանցից 20-ով պակաս աղջիկ: Ընդամենը քա՞նի երեխայ է սովորում ուսումնարանում:

280. Ձկնորսը 50 հատ ձուկ որսաց: Դրանից 10 հատը գեղարքունի էին, գեղարքունուց 3 անգամ աւելի իշխան, իսկ մնացածը՝ կողակ: Նա քա՞նի կողակ էր բռնել:

281. Հայրը 50 տարեկան է, մայրը 10 տարով փոքր է հօրից, իսկ որդին 4 անգամ փոքր է մօրից: Որդին քանի տարեկան է:

282. Խոհարարը առաւ 4 տասնեակ ձու, տասնեակը 10 կոպէկով և 2 գրվանքա կարագ, գրվանքան 20 կոպէկով: Նա տուեց մի մանէթանոց: Ի՞նչքան մանր փող պիտի յետ ստանայ:

283. Ոսկերիչը երկու կտոր ոսկի առաւ, մի կտորը 40 մսխալ էր, իսկ միւսը՝ 30 մսխալ: Այդ երկու ոսկու

կտորները ձուլեց, խառնեց իրար հետ և ստացած խառնուրդից շինեց մի քանի շղթայ—հատը 10 մսխալ ծանրութեան: Նա քանի շղթայ շինեց:

284. Մանրավաճառը արշինը 30 կոպէկով 3 արշին ժապաւէն ծախեց, Նա դրա մէջ ի՞նչքան փող աշխատեց, եթէ ինքը ժապաւինի արշինը առած ունէր 20 կոպէկով:

285. Մրգավաճառը ծախեց 3 տասնեակ կիտրոն—տասնեակը 20 կոպէկով և մի տասնեակ նարինջ, տասնեակը 40 կոպէկով: Այդ բոլորի համար նա ի՞նչքան փող ստացաւ:

286. Մի կին արշինը 20 կոպէկով 9 արշին չիթ առաւ և վճարեց 60 կոպէկ: Ելի քանի կոպէկ պարտք մնաց նա:

287. Գիւղացին 100 փութ գարի ունէր. 40 փութը նա յետ պահեց սերմացուի համար, 30 փութը՝ իւր ձիաների համար, իսկ մնացած գարին ծախեց: Նա քանի փութ գարի ծախեց:

288. Հացթուխը 2 փութ ալիւրից թխեց, հատը 10 զրկանքանոց, 10 հատ հաց: Այդ ալիւրը ի՞նչքան է աւելացրել:

289. Գործակատարը 80 մանէթ ընծայ ստացաւ: Այդ փողի չորրորդ մասով նա շորացու մահուդ առաւ: Իրան ի՞նչքան փող մնաց:

290. Պարտիզում կար 100 հատ լորենի, 5 անգամ պակաս բարդի և բարդիներից 2 անգամ աւելի կաղնի: Քանի կաղնի կար պարտէզում:

291. Երկու տղայ միասին 50 հատ կակալ առան. դրա համար մէկը տուեց 3 կոպէկ, իսկ միւսը՝ 2 կոպէկ: Նրանցից իւրաքանչիւրը քանի կակալ կստանայ:

292. 50 մանէթով կարելի է առնել 10 սայլ հացի փայտ: 100 մանէթով քանի սայլ այդ տեսակ փայտ կարելի է առնել:

293. Պղնձգործը ծախեց 90 մանէթով 6 հատ ինքնաեռ և մի քանի հատ կաթսայ: Ամեն մի ինքնաեռը նա ծախեց 10 մանէթով, իսկ մի կաթսան՝ 3 մանէթով: Նա քանի կաթսայ ծախեց:

294. Մի մարդ, փութը 40 կոպէկով, 2 փութ գարի առաւ և տուեց 2 հատ տասչահանոց: Նա ի՞նչքան մանրափող պիտի յետ ստանայ:

295. Մրգավաճառը ծախեց 10 զրկանքա տանձ, զրկանքան 4 կոպէկով և 5 հատ սեխ և բոլորի համար ստացաւ 90 կոպէկ: Ի՞նչ արժէք ամեն մի սեխը:

296. Այգեպանը իւր այգուց ստացաւ 40 փութ խրնձոր: Այդ խնձորների չորրորդ մասը պահեց իրան համար, իսկ մնացածը ծախեց փութը 2 մանէթով: Նա ի՞նչքան փող ստացաւ:

297. Մայրը 60 տարեկան է, իսկ որդին 3 անգամ փոքր է մօրից: Քանի տարեկան է որդին:

298. Աղախինը 4 հատ աբասանոց և 2 հատ երկուշահանոց սպիտակ փողը մանրացրեց և ստացաւ շահանոցներ: Նա քանի շահանոց ստացաւ:

299. Գիւղացի կինը քաղաք բերեց ծախելու համար ձուեր: Առաջին օրը նա ծախեց մի տասնեակ ձու, երկրորդ օրը՝ 30 հատ և նրան էլի մնաց 20 ձու: Նա քանի ձու էր բերել ծախելու:

